# Ժողովրդի կաթնաղբյուրից, մանանայից է նրա խաղն ու տաղը

## ԼՐԱՆՈՒՄ Է ԳՈՒՍԱՆ ՇԱՀԵՆԻ ԾՆՆԴՅԱՆ 105-ԱՄՅԱԿԸ



Գուսան Շահենի գեղեցիկ ու սրտաբուխ երգերը լայն ճանաչում են գտել հենց իրենց ստեղծման ժամանակներից և, կատարվելով ու փոխանցվելով տասնամյակների ընթացքում, այսօր էլ շարունակում են մնալ թարմ ու վայելում են ժողովրդի սերը: Դրանք սիրված են նաև Դոնի հայության կողմից, հաճույքով կատարվում և ունկնդրվում են տոնական հանդեսների, ընտանեկան ուրախությունների և այլ արարողությունների ժամանակ:

Հատկանշական է մեծատաղանդ գուսանի մասին հայտնի գրող Զարզանդ Դարյանի խոսքը. "Դու ծնվել ես քո ժողովրդի հետ, անհիշելի ժամանակներում, երբ Մշո ծուռ սիրահարը տամբուրեն ձեռքին բարձրանում էր աղջկա մոր երթիկին ու նվագով քնից արթնացնում սիրածին: Քո կաքվու անուշ ձենը հիմա էլ շատ քնած սրտեր է վարթնեցնում, սիրո ու կյանքի կոչում:

Լավ ես ճանաչել ինքդ քեզ, աշուղ, իրավ, քո ժողովրդի կաթնաղբյուրից, մանանայից է խաղ ու տաղդ... մանանա շատ ես հավաքել ու գիտես ինչպես է գոյանում՝ լուսադեմին օդի մեջ անտեսանելի իջնում է ծառերին, ծաղիկներին, քար ու թփին, վանական ձևեր ընդունում՝ խոյի, ցուլի, աղավնու: Էդպես էլ քո խաղերն են հյուսվում ժողովրդի հոգու հնչյուններից, մերթ մռնչում են ցուլի պես, մերթ աղավնու թևաբախումով, կամ կաքավի շախկղոցով սիրո թասն են մոտեցնում պապակ շուրթերին: Քո խաղն այն պաղ ջուրն է, որ բխում է ամպի տակից ու ծաղիկ քաղող կույսի բռան մեջ լցված՝ շաղ գալիս շուրջդ: Ինչ երգում ես՝ դարձնում ես սրտամոտ ու սիրելի, դարձնում ես սիրո խորհրդանիշ:

Քո համն ու հոտն ուրիշ է: Քո ջուրն ուրիշ ջրեն է, աշուղ":

Ժողովրդական երգիչ-գուսանի ճակատագիրը մանուկ հասակից անխզելիորեն կապված է եղել հարազատ ժողովրդի բախտի հետ: Գաղթելով Արևմտյան Հայաստանից նրա հարազատները հաստատվում են Ալեքսանդրապոլի գավառի Կրասար գյուղում: Այստեղ էլ 1909 թ. սեպտեմբերի 14-ին ծնվում է Շահենը: 1920 թվականին թուրքական հրոսակախմբերը արյունոտ դատաստան են տեսնում Շիրակի հազարավոր անպաշտպան հայ ընտանիքների, այդ թվում և Շահենի հարազատների հետ:

Իր վիրավոր մոր հետ միայնակ մնացած Շահենը ստիպված է լինում մտնել ամերիկյան որբանոց, բայց երկար չի մնում: Մայրը, իմանալով, որ շուտով որբանոցը Ամերիկա է տեղափոխվելու, իր որդուն փախցնում է: Այդ ժամանակ արդեն շնորհալի պատանին բացահայտել էր իր երաժշտական ձիրքը: Նրա գեղեցիկ, հնչեղ ձայնը գրավում էր բոլորին:

Շահենը երգում է ոչ միայն մեր ժողովրդական գողտրիկ երգերը, այլև սկսում է հորինել սեփական մեղեդիներ, հանդես է գալիս արվեստի ստուգատեսներում և փառատոներում, բազմիցս արժանանալով խրախուսանքների և պարգևների:

1937 թվականին Շահենն ընդունվում է Հայֆիլհարմոնիայի երգի-պարի պետական անսամբլ, որի ծրագրում իրենց պատվավոր տեղն են գրավում այդ տարիներին նրա հորինած "Ալմաստը շողում է", "Կոլխոզական", "Հայաստանի աղջիկները", "Յոթն օր, յոթ գիշեր" երգերը:

Մասնակցելով 1939 թ. Մոսկվայում կայացած հայկական արվեստի տասնօրյակին, Շահենը մեծ հաջողությամբ կատարում է իր հանրահայտ "Սասնա ծուռ" երգը, որը նվիրված է "Սասունցի Դավիթ" էպոսի հազարամյակին: Շնորհալի կատարող-ստեղծագործողը այդ օրերին պարգևատրվում է "Պատվո նշան" շքանշանով:

Գուսան Շահենը մասնակցում է Հայրենական մեծ պատերազմին: 1945 թ. մայիսին, ֆաշիզմի դեմ սովետական ժողովրդի տարած մեծ հաղթանակի տոնակատարության օրը, Մոսկվայի Կարմիր հրապարակում հնչում է հայ ժողովրդի տաղանդավոր գուսանի ձայնը, նա կատարում է իր "Հաղթանակով վերադարձանք մեր քաջ դիվիզիա" և "Մոսկվա" հայրենասիրական երգերը:

1945 թվականից գուսան Շահենը ղեկավարել է "Շահենի քնարը", "Երևան", "Շիրակ" գուսանական անսամբլները:

1946 թվականին ժողովրդական արվեստի համամիութենական ստուգատեսին Շահենն արժանանում է առաջին կարգի մրցանակի: Նա սկսում է համերգներով հանդես գալ Սովետական Միության տարբեր քաղաքներում, ամենուրեք արժանանալով ջերմ ընդունելության: Հեռավոր Սիբիրում, Ենիսեի ափին, նա հորինում է "Սիբիրյան գյոզալ" սքանչելի լիրիկական երգը:

Իր ստեղծագործության մեջ Գուսան Շահենը հիմնվել է ծննդավայրի, ինչպես նաև Շիրակի ժողովրդական երգարվեստի հարուստ ավանդույթների վրա: Նրա մեղեդիներին բնորոշ է ասերգային, լայնաշունչ երգային և պարային տարրերի զուգորդումը: Նրա երգացանկը լայն ու բազմազան էր: Նրա երգերին հատուկ են թե նրբին ու խոր քնարականությունը և թե էպիկական գործի լայն շունչը: Պարզ քառյակային ձևերի կողքին Շահենն ունի ծավալուն ստեղծագործություններ, որոնք մերձենում են բալլադի ձևին:

Գուսան Շահենը հիմնալիորեն ուսումնասիրել և յուրացրել էր հայ գեղջկական երգարվեստի առանձնահատկությունները՝ իր ստեղծագործություններում յուրովի զարգացնելով մեղեդիական հարուստ ավանդները: Գուսանի մեղեդիների թարմ ու բնական ձայնախաղերը նրբորեն երանգավորում են կերպարը, հարստացնում և խորացնում նրա արտահայտչականությունը:

Շահենի երգերը թե ոճով և թե կառուցվածքով ամբողջական են, աչքի են ընկնում մտահղացման հստակությամբ, տեքստի և երաժշտության իսկական միաձուլությամբ: Նա խստապահանջ և համեստ արվեստագետ էր, նախանձախնդիր էր իր ստեղծագործությունները մինչև վերջ հղկելու հարցում:

Բնածին ստեղծագործական տաղանդից բացի Շահենը օժտված էր գեղեցիկ ձայնով, որի շնորհիվ իր երգերի հրաշալի կատարողն էր:

Մեծատաղանդ գուսանը ստեղծել է ավելի քան 300 երգեր: Նա հեղինակ է նաև "Էլինար" պոեմի, "Հերիքնազ" երաժշտական պատկերի, "Սառա" սիրավեպ-երգաշարի և "Սասնա Դավթի ու Մսրա Մելիքի մենամարտը" դյուցազներգության: Լայն ժողովրդականություն են վայելում նրա "Սասնա ծուռ", "Ալմաստը շողում է", "Խռոված էր", "Թուխ մազերուդ", "Անծանոթ սեր", "Նաիրյան դալար բարդի", "Անցա գնացի", "Կոմիտաս", "Ղուկասյան" և այլ երգեր:

# Լուսպարոն պաբիին հեքիաթը

*(ՊԱՏՄԱՆԵԿԱՆ ՀԻՇՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՉԱԼԹՐԻ ԽՈՍՎԱԾՔՈՎ)*

1949-ին տարին օրախ ամիսի ժամանակ ես, մեծ պաբայիս Գրիշան (Գրիգոր Հայբարյան), մորքուրիս Արտաշը (Արտաշես Աթոյան, Աստված օղորմե հոքուն) ժեքըս էլլանք Աղի ջուրին դերան պիժմա արոտին չիչակը ժողվելու գնացինք: Աղիվոր չիչակը ինա ապրիմ-չապրիմ չիչակին մեջտեղի դեղին կլորը կա նը, իդոր պես կոնտիկին ծարը պիժմային 8-10 հատ դեղին գունի չիչակ կըլա: Իդիկը մկրատով կըկտրեինք, թոփ կանեինք, արեվ տեղա քըչորցունեինք և ապտեկ կըտանեինք, 3 մանեթ կիլը կառնեին:

Աղի ջուրի դերայի քոփուրին քովեն մտանք և ժողվելեն դեպի արեվմուտք գնացինք: Մինք ալ աշտըխ որըս ինչքան կըլար նը ժողվեցինք, Միկոյանի կոլխոզի 2-ում բրիգադին հասանք, կընայինք բրիգադը հիչ մաշդ չիկա: Մեմ ալ կընայիս՝ Պարոնին Լուսպարոն պաբին (Լուսպարոն Հայբարյան)՝ մեքհատա բարաք ծբեռկա ձեռքը՝ "Ի՞նչ կանիք, ինչի՞ էկիլ իք",- ասաց: Մինք ալ ասինք ինչի էկածներըս:

- Աստեղը մաշդ ըլալու չէ,- ասաց:- Ան էրեսը Հոլուբին յառին վրան բրիգադը կալ ունի, սաղ հալխնա հոն է,- ասաց,- հայտը իմիս քովըս կեշտանք:

Ինքը բրիգադեն մեկ սըրթ անքով, դեպի հարավ-արեվմուտք 11-ում տրակտորի օտրյադը խարավուլ է, թեք ծբեռկայով ալ հոս խմելու ջուրի էկիլ է, բրիգադին դիմացով դերան խմելու ջուրի ջրհոր կա: Առինք ծբեռկան, ընչանք դերան, քաշեցինք մեկ ծբեռկայա ջուր և գնացինք Լուսպարոն պաբիին հետ:

Օտրյադին տունին քովը հերվան կուտի կան էղըլ է կայեր, հոս-հոն մեկ քանի հատըմ էլլած գուլայնի շապկաներնա խոշոր, սալթ թավայի խատա: Դհա հասած չին, համա մեչի քիչիմը բայաթները փետեցինք, բերինք ծեծեցինք: Օջախ խոշտեցինք, մեկ կտորմա թեներե ջեմ արինք, ընծած թաբլած չորցած խոշոր չիպետք արոտներ կային, մեկ էրկու խուչախըմ իտկից բերինք, կրակ վառեցինք, բաշլայեցինք կուտ բըհորելու: Հեմը կըբհորինք հետենա կուտինք: Պաբինա բաշլայից հեքիաթ ասելու: Մեքատ ասաց ծար էլլավ, մեքատա բաշլայից: Աղիվորնա կեսերը ասիլ էր կայեր, դուսը աշտըխ մըթնեցավ: Կրակնա անցուցինք ու նես քոչվեցանք: Տունին մեչի բոլմեները արած չէր, համա պոլը սաղլամ արած, վրանա խոտ փռած էր: Իդոր վրան պառկեցանք, պաբինա կենե բաշլայից հեքիաթը: Իդա հեքիաթին մեչը սիպես տեղ կա. օցը սողալով չիհասնի, թռչունը թռչելով, իդայա ասաց համանա բաշլայից խըռլդեմիշ անելու: "Հանա հուլուշիթ էղավ",- ասաց Արտաշը:

Խայերով խնդացինք: Անկիցա վաշտեցուցինք պաբիին, ինա վախ էկած տեղենա քիչիմը առչովե առավ, էկավ գենե իդա տեղին հասավ ու քուն էղավ:

Կընայինք ըլալու բան չիկա, մեմա չիկաշտեցուցինք խեղըջին: Նոր արած պոլը թաժա տախտակի ֆոտին հետ չոլի խոտին ֆոտը մեծիյա անուշ-անուշ քուն արավ:

Մեմա աչքերըս բացինք նը, դուսը լուսացիլ էր, արեվնա ընծայած: Տըխկտըխկի ձան է: Պաբին, էղըլ է, բրիգադի պռադուկտի ալուրեն մետոմը առիլ է, խմոր շաղվիլ է, շիշայով լոշի թել կըբանա: Մեմեկ հատ փայերըս լոշ էփից տուվից: Կերանք լոշը, շնորհակալութին ասինք, առինք չուվալներըս ալ, դեպի գեղ շըտկըցանք:

Աստված օղորմե հոքուն, ըռինդ մաշդ էր Լուսպարոն պաբին:

Խաչերես ՀԱՅԲԱՐՅԱՆ
գ. Չալթր